9783

1929

334.5(47.925)
Б-81

# ԲԱՆԿՈՈՊԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

## 1927—28 ՏԱՐՎԱ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

## ՅԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

334.5(47.925
Ե-81
2001

ՅԵՐԵՎԱՆ

1929

2010

334.5(47.925)
Կ - 81

# ԲԱՆԿՈՈՊԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
## 1927—28 ՏԱՐՎԱ
## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
## ՅԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՅԵՐԵՎԱՆ 1929

13628-У2

ՊԵՏՀՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Պատ. № 650.
Գրառեպվար № 2187 (բ)
Տիրաժ 500

ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ... ССР
им. А. МЯСНИКЯНА

34 51-53

# ԲԱՆԿՈՌՊԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 1926/28 ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵ ՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հաշվետու շրջանում Բանկոոպի Վարչությունը ինչպես և ամբողջ սպառողական կոոպերացիան աշխատել է բավական ծանր պայմաններում։ Մի կողմից մեր յերկրի սոցիալիստական տնտեսության վերելքի հետ կապված տնտեսական վորոշ դժվարությունները, ապրանքային սովը, ֆինանսական սուղ միջոցները,—մյուս կողմից Բանկոոպի սեփական միջոցների դանդաղ աճումը համեմատած նրա շրջանառության աճման հետ։ Սակայն, չնայած այս բարդ ու դժվար պայմաններն, Բանկոոպը հաշվետու շրջանում կարողացել է ունենալ զգալի նվաճումներ։

Բանկոոպի անդամների թիվը մի տարում աճել է 27,3 տոկոս, իսկ վերջին կիսամյակում 48 տոկոսով։ Ապրանքաշրջանառությունն աճել է 42,7 տոկոս, առևտրական ցանցը 15-ից հասել է 35 կետի, իսկ վերջին կիսամյակում 68-ի և վերջապես իր աշխատանքքներին անմիջական մասնակից է դարձրել կոոպերատիվ անդամներին, խանութային հանձնաժողովների և սեկցիաների միջոցով 350-ից—400 հոգի. նաև ուժեղացրել է կուլտ-կրթական աշխատանքները։

Ահա այն հիմնական ցուցանշանները, վոր վկայում են նրա ընդհանուր աճումը ու ձեռք բերած հաղթանակները։

Սակայն այս նվաճումներով չպետք է թաքցնել և մոռացության տալ այն բազմաթիվ բացերն ու թերությունները, վոր ունի ինչպես ամբողջ սպառողական կոոպերացիան, նույն պես և Բանկոոպը։

Մեր սոցիալիստական տնտնսության վերելքի հեա միասին աճում ու բազմանում են նաև մասսաների սպառողական ու կուլտուրական պահանջները և սպառողական կոոպերացիան պետք է կարողանա հաղթահարելով բոլոր դժվարությունները բավարարել այդ պահանջները ավելի լրիվ, կազմակերպված ու կուլտուրական ձևերով։

Առաջին հերթին պետք է մատնանշել, վոր արհմիության անդամների մոտ 42 տոկոսը դեռ ևս դուրս է մնացել Բանկոոպի

շարքերից· Կանանց և յերիտասարդության կոոպերացումը դեռ բավական դանդաղ է ընթանում. ահա մի խնդիր, վորի վրա պետք է ուշադրություն դարձնի Բանկոոպը, նրա հետ միասին արհմիությունները և բոլոր հասարակական կազմակերպությունները. պետք է արհմիության անդամների լրիվ կոոպերացումը իրագործել մոտակա ժամանակում։

Բանվորական բյուջեյի ընդգրկման գործում դեռ շատ բացեր կան. հիմնականը գյուղատնտեսական մթերքների հայթայթման խնդիրն է, վորը մեծ չափով կապված է նաև մեր գյուղատնտեսական կոոպերացիայի հետ։ Չնայած շրջանառության մեջ գյուղամթերքների տեսակարար կշիռն ավելացել է 12,8-ից մինչև 15,9, այնուամենայնիվ դա շատ քիչ է. բանվորական բյուջեյի խոշոր մասը կազմում են գյուղատնտեսական մթերքները և նրանց լրիվ հայթայթմամբ է, վոր մենք կարող ենք բանվորի բյուջեն ազատել մասնավոր շուկայից և այդպիսով ապահովել աշխատավարձի կայունությունը։

Գյուղացիական մթերքների հայթայթման խնդիրը պետք է լինի Բանկոոպի և գյուղատնտեսական կոոպերացիայի որվա հարցը։

Հետևյալ կարևոր խնդիրը սեփական միջոցների և փայավճարների խնդիրն է։ Բանկոոպի սեփական միջոցներն անմխիթար դրության մեջ են. նրանք շրջանառության մեջ չեն մասնակցում. դա հետևանք է այն յերևույթի, վոր մի կողմից Բանկոոպը տարիների ընթացքում կուտակում շատ քիչ է կատարել և յերկրորդը, վոր հիմնական կառուցումների համար, ինչպես և մեքենայական փոխ համար անհրաժեշտ միջոցներ չստանալով իր սեփական միջոցներն է դրել։ Բանկոոպը հանդիսանալով հասարակական կազմակերպություն, վոչ մի քաղաքացիական իրավունք չունի ներկայումս, յերբ Պետությանն անհրաժեշտ են խոշոր միջոցներ յերկրի ինդուստրացման համար, իր 10-ից-12 միլիոնի շրջանառությունը կատարել Պետական փոխառու միջոցներով։ Անհրաժեշտ է մի կողմից ապահովել սոցիալիստական նորմալ կուտակումը և մյուս կողմից ներգրավել անդամների միջոցները գլխավորապես դիֆֆերենցիալ փայավճարի սիստեմի կիրառման միջոցով։

Զափազանց կարևոր խնդիր է սպառողների սպասարկման և այստեղից կոոպերատիվ կադրերի խնդիրը։ Առևտրական ապարատը շատ մեծ թերություններ ունի սպասարկման գործում.



այստեղ անհրաժեշտ է մի կողմից մտցնել առևտրի նոր ռացիոնալ միջոցներ և մյուս կողմից զտել կոոպերատիվ աշխատողների շարքերը անհարազատ, բյուրոկրատ և վնասող տարրերից, վորոնք իրենց աշխատանքով վարկաբեկում են կոոպերացիան. վերջապես յերրորդը—ավելի հարազատ տարրերից պատրաստել նոր կուլտուրական կոոպերատորների կադրեր։

Սրա հետ անմիջականորեն կապված է կուլտուրական աշխատանքների խնդիրը, վորը չնայած ստացել է վորոշ ծավալում, բայց և այնպես անհրաժեշտ է ավելի լայնացնել ու խորացնել մասսաների կոոպերատիվ դաստիարակության և նոր կադրերի պատրաստման ուղղությամբ։

Ահա այս հիմնական խնդիրներն են, վորի վրա պետք է բևեռեն իրենց ուշադրությունը կուսակցական, պրոֆեսիոնալ կազմակերպությունները և Բանկոոպի 16,000 անդամները։

Այս խնդիրներին վերջնական լուծում տալու համար, պետք է ավելի զարկ տալ կոոպերատիվ հասարակայնության և կոոպերատիվ ակտիվի գործունեյության, ընտրությունների ընթացքում ընտրելով ավելի հարազատ, գործունյա ընկերների։

Հետագա Վարչությունը, լիազորները, խանութային հանձնաժողովները և սեկցիաները պետք է այս խնդիրների վրա կենտրոնացնեն, իրենց ուշադրությունը ու մոտակա ժամանակում Բանկոոպի 16,000 անդամների աջակցությամբ նոր ու նոր նվաճումներ անեն սոցիալիստական տնտեսության շինարարության ճանապարհին։

## ՅԵՐԲԱՆԿՈՈՊԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹՎԻ, ՓԱՅԱԴԻՐ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՅԵՎ ՄԻՋԻՆ ՓԱՅԱՎՃԱՐԻ ՇԱՐԺՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ ԲԱՑԱՐՁԱԿ ԹՎԵՐՈՎ ՅԵՎ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ԴԵՊԻ ՆԱԽՈՐԴ ԺԱՄԿԵՏԸ

| | *Բացարձակ թվերով առ 1/10* | | | | | *Տոկոսներով դեպի նախ. ժամկ.* | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1925 | 1926 | 1927 | 1928 | 1929 | 1/10,26 | 1927 | 1928 | 1929 |
| *Անդամների թիվը* . . | 6853 | 8003 | 9749 | 10460 | 17,000 | 116,8 | 121,8 | 107,3 | 162,5 |
| *Փայադիր դրամագլխ.* . | 20738 | 35068 | 72035 | 111265 | 255,000 | 168,0 | 205,9 | 153,5 | 230,0 |
| *Միջին փայավճար* . . | 3—03 | 4—38 | 7—39 | 10—60 | 15—00 | 145,3 | 168—4 | 144.0 | 141,5 |



# 3. ԲԱՆԿՈՈՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

**Բանկոոպի անդամների (փայատերերի) թվի, նրա փայավճարային կապիտալի յեվ միջին փայավճարի շարժման աղյուսակի տաքիվ.**

*Մասսաները կոոպերացնելու գործում Յերևանի Բանկոոպն անցյալում հաջողությամբ կատարել է իր վրա դրված պարտականությունները և ձեռք է բերել վորոշ նվաճումներ։*

*Ներկայումս էլ ինչպես և անցյալում կոոպերացման գաղափարը Յերևանի աշխատավոր մասսաների մեջ արմատացնելու գործի ծանրության մեծ մասը ընկնում է Բանկոոպի վրա։ Մինչև 1927 թ. հոկտեմբերի 1-ը Բանկոոպի անդամների թվի աճման տեմպն ամեն տարի նախորդ տարվա համեմատությամբ արտահայտվում է 17-ից մինչև 22 տոկ.։*

*Առ 1928 թ. հոկտեմբերի 1-ը Բանկոոպի անդամների թիվը, մինչև նրանց վերացուցակագրությունը հավասար էր 12,452-ի. վերացուցակագրումից հետո այդ թիվը իջնում է 10,460-ի, վոր բացատրվում է նրանով, վոր մի կողմից հեռացել են մոտ 1400 զինվորականներ, և մյուս կողմից հեռացել են «մեռյալ» անդամները։*

*Արհմիությունններն իրենց շարքերում այդ նույն ժամանակ հաշվում եյին 16,382 անդամ, ապա դրանցից միայն 9460 հոգու Բանկոոպի անդամ լինելու հանգամանքն ըստինքյան խոսում է այն մասին, վոր մասսաները կոոպերատիվ շարքերը ներգրավելու գործում Բանկոոպը տակավին շատ անելիքներ ունի։ Այդ հարցը դրական մտքով լուծելու համար պատասխանատու աշխատանք ունեն կատարելու նաև կոոպերատիվ ու պրոֆ. ակտիվները։*

*Պրոֆմիությունների մեջ կոոպերացվածության ամենամեծ տոկոսը (90,3 տոկ.) տալիս է տպագրիչների միությունը, յերկրորդ տեղը բռնում է Խորհծառը (89,2 տոկ.) ապա սննդագործները (85,4 տոկ.), կաշեգործները (82,9 տոկ.), և վերջապես մանածագործները (62,6 տոկ.)։ Վերջին տեղը բռնում են Հողանտառ միությունը (36,2 տոկ.) և կառուցողները (40,3 տոկ.)։ Անհրաժեշտ է մատնանշել, վոր կառուցողները կոոպերացման գործում հաշվետու տար. ամենամեծ նվաճումն են արել (24,2 այժմ 40,3)։*

*Կանանց կոոպերացման ասպարեզում տակավին խոշոր անելիքներ ունենք։ 1928 թ. հոկտեմբերի 1-ին կանանց թիվը*

Բանկոոպի անդամների մեջ արտահայտվում էր միայն 15,4 տոկ., որ իհարկե չափազանց քիչ է։

Առ 1-ն հոկտեմբերի 1928 թ. պրոֆմիութjունների անդամների միայն 57,8 տոկ. էր կոոպերացված. այստեղ կոոպերացման տոկոսն իջել է նրա համար, որ համեմատաբար արհմիութjան շարքերն ավելի խոշոր թափով են աճում, քան կոոպերացիայի։

Փայավճարային կապիտալը կոոպերատիվ կազմակերպութjան համար ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն ու նրա գործունեութjան հիմնական լծակն է հանդիսանում։

«Կոոպերացիան մասսաների համար» լոզունգը կարող է կենսագործվել միայն այն դեպքում, յերբ մասսաները ակտիվ մասնակցում են թե կոոպերացիայի առօրյա աշխատանքներին և թե իրենց կոոպերատիվի համար ֆինանսական առողջ հենակետ ստեղծելու գործին։

Փայավճարային կապիտալի աճումը բավական շոշափելի յե մեզ մոտ. այնուամենայնիվ դա իհարկե շատ քիչ է Բանկոոպի նման մի կազմակերպութjան համար։ 1928 թ. հոկտեմբերի 1-ին Բանկոոպն ունեցել է 20,738 ռ. փայավճարային կապիտալ, իսկ 1929 թ. հոկտեմբերի 1-ին այդ գումարը հասնում է 111,265 ռ., այսինք համարյա հինգ ու կես անգամ ավել քան 1925 թ.։ Սակայն, յերբ մենք նկատի ունենանք սպառողի կողմից ներկայումս կոոպերացիային առաջադրվող պահանջներն ու Բանկոոպի տեսակարար կշիռը մանրավաճառ շուկայում, որի կապակցութjամբ նրա (Բանկոոպի) շրջանառութjունն աճում է վիթխարի արագութjամբ և մյուս կողմից էլ այն հանգամանքը, որ վատացել են պետարդյունաբերութjան կողմից կոոպերացիային տրվող վարկերի պայմանները (վարկավորման միջին ժամկետը 1925-26 թվին 50 որ, 1928-29 44 որ), միանգամայն պարզ կլինի, որ 111,265 ռուբլին, ինչպես շրջանառու միջոց, չափազանց քիչ է։

Դիֆերենցիալ փայավճարի սիստեմը միակ միջոցն է, որով կարելի կլինի անդամների միջոցները համահավասար չափերով գրավել դեպի կոոպերացիայի շրջանառութjունը, ուստի և այդ սիստեմի կիրառման հարցը Բանկոոպի ագամները պետք է վճռեն դրական իմաստով և աջակցեն նրա կիրառման։

Մյուս կարևոր խնդիրն ավանդների հարցն է. յեթե այդ խնդրում մենք դեռ բավական հեռու յենք Գերմանիայի բանվորական կոոպերատիվներից, ուր փայատերերի ավանդները ծառայում են ոչ միայն ապրանքաշրջանառութjան այլ և հիմնական շրջանառութjան համար, ապա մեզ հարկավոր է գոնե գնալ ԽՍՀՄ մի քանի կոոպերատիվների ուղիով, որոնք խոշոր նվաճումներ ունեն անդամներից ավանդների գանձման գործում։



## ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

| ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ | 1 հոկտ. 1927 թ. մինչև վերահաշվ. | | | 1 հոկտ. 1928 թ. վերահաշվառ. հետո | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Պրոֆմիութ. անդամների թիվը | Նրանցից կոոպերացված անդամներ | Կոոպերացված անդամների տոկոսը | Պրոֆմիութ. անդամների թիվը | Նրանցից կոոպերացված անդամներ | Կոոպերացված անդամների տոկոսը |
| Հողանտառ . . . . | 1131 | 540 | 47,7 | 1736 | 628 | 36,2 |
| Լեռնագործներ . . | 129 | 71 | 55,0 | 245 | 105 | 42,8 |
| Փայտամշակներ . . | 249 | 107 | 43,0 | 254 | 117 | 46,1 |
| Կաշեգործներ . . . | 320 | 253 | 79,1 | 286 | 240 | 83,9 |
| Մետաղագործներ . | 343 | 241 | 70,2 | 459 | 323 | 70,4 |
| Տպագրիչներ . . . | 364 | 356 | 97,8 | 377 | 340 | 90,3 |
| Սննդագործներ . . | 898 | 621 | 69,2 | 859 | 733 | 85,4 |
| Կառուցողներ . . . | 3032 | 733 | 24,2 | 3274 | 1312 | 40,3 |
| Ջուլհակներ . . . | 247 | 150 | 60,7 | 234 | 193 | 82,6 |
| Կարողներ . . . . | 269 | 194 | 72,2 | 262 | 155 | 59,2 |
| Փոխադրողներ . . | 696 | 388 | 55,9 | 1036 | 478 | 46,9 |
| Ժողկապ . . . . . | 207 | 202 | 97,6 | 213 | 170 | 79,9 |
| Գեղաշխ . . . . . | 413 | 262 | 63,5 | 507 | 240 | 47,4 |
| Բժշկասանիտարակ. | 989 | 517 | 52,4 | 1241 | 666 | 53,7 |
| Լուսաշխ . . . . . | 1.651 | 991 | 60,0 | 2,023 | 848 | 41,8 |
| Խորհծառ . . . . | 2.401 | 2163 | 90,1 | 2365 | 2104 | 89,2 |
| Կոմմունալնիկներ . | 546 | 538 | 98,9 | 575 | 370 | 64,5 |
| Ժողսնունդ . . . . | 382 | 175 | 45,9 | 435 | 269 | 61,9 |
| Ընդամենը . | 14267 | 8502 | 59,5 | 16382 | 9211 | 57,8 |
| Պրոֆմիութjան անդամներից բանվորն. | | 4059 | 47,7 | | 4060 | 42,5 |
| Պրոֆմիութjան անդամներից ծառայողն | | 4443 | 52,3 | | 5400 | 67,1 |

| Բանկոոպի փայատերերից վոչ պրոֆ-միության անդամներ | 1.X 27 | 1.X 28 |
|---|---|---|
| 1. Ծառայողներ | — | — |
| 2. Գյուղացիներ | — | 198 |
| 3. Տնային տնտեսուհի | — | — |
| 4. Տնայնագործներ | 281 | 416 |
| 5. Զինվորականներ | — | 268 |
| 6. Այլք | 966 | 120 |
| Արհմիության վոչ անդամ | 1247 | 1002 |
| Ընդամենը անդամներ | 9749 | 10,462 |
| Վորոնցից կանայք | | 1,629 |
| Յերիտասարդներ | | 1.620 |



## ԸՆՏՐՈՎԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ 1927/28 ՏԱՐՈՒՄ

| | | |
|---|---|---|
| **ԼԻԱԶՈՐՆԵՐԻ** | Քանի նիստ են ունեցել սեկցիաները | 14 |
| | Քանի լիազոր է մասնակցել սեկցիաների աշխատանքներին | 128 |
| | Հաճախորդների թիվը — 3-րդ ժողով | 170 |
| | Հաճախորդների թիվը — 2-րդ ժողով | 185 |
| | Հաճախորդների թիվը — 1-ին ժողով | 213 |
| | Քանի լիազորական ժողով է ունեցել | 3 |
| **ԽԱՆՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ** | Անդամն. մեջ անցկացրված ժողովի քանակը — Հատուկ | 3 |
| | Անդամն. մեջ անցկացրված ժողովի քանակը — Վերընտրողական | 58 |
| | Քանի ժողով է գումարել կոոպերատ. | 14 |
| | Կոոպերատիվ կազմակերպությունների քանակը | 120 |
| | Քանի զեկուցում է ունեցել խանութ. հանձն. տեղ. | 4 |
| | Քանի առաջարկ և դիմում է տված խ. հանձնաժողովի կողմ վարչությանը — Նրանցից քանիսն է ստացել լուծում | 93 |
| | Քանի առաջարկ և դիմում է տված խ. հանձնաժողովի կողմ վարչությանը — Ընդամենը | 165 |
| | Խանութային հանձնաժողովն. նիստերի քանակը | 79 |
| | Քանի ընդհանուր ժողով կամ կոնֆերանս է ունեցել | 6 |
| | Քանի առևտրական կետ է հրակում յուրաքանչյուր խանութային հանձնաժողով | 1 |
| | Քանակը | 25 |

## ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱԿՏԻՎԻ ՅԵՎ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԹԻՎ

### ԸՆՏՐՈՎԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ 1927/28 ՏԱՐՈՒՄ

| Կազմը | Ընդամենը | Բանվոր | Ծառայող | ն վ կ | կկ անդամ | ԼԿՑԵՄ | Երիտասարդ մինչև 23 տար. |
|---|---|---|---|---|---|---|---|
| Լիազորների կազմը | 213 | 98 | 115 | 15 | 87 | 17 | 29 |
| Խանութային հանձ. կազմը | 79 | 36 | 43 | 9 | 18 | 8 | 8 |
| Վերստուգիչ հանձն. կազմը | 7 | 3 | 4 | — | 3 | 1 | 1 |
| Վարչության կազմը | 15 | 7 | 8 | 2 | 11 | 1 | 2 |

(Բոլոր խմբերի համար՝ «Նրանց թվում»)



Կոոպերացիայի հետագա զարգացումն ու առողջացումը կարող է և պետք է ընթանա միմիայն անդամների անմիջական մասնակցության միջոցով. այդ տեսակետից հաշվետու տարում անհամեմատ մեծ նվաճումներ ենք ունեցել, քան անցյալներում:

Ինչպես աղյուսակը ցույց է տալիս, հաշվետու տարում Բանկոոպի անդամներից ընտրված խանութային հանձնաժողովներն այս տարի յեղել են գործունյա (ի բացառյալ մի քանիսի) և մեծ օգնություն են հասցրել խանութների աշխատանքներին, սանիտարական դրության բարելավման և այլ աշխատանքներում:

Սեկցիաներ անցյալներում չեն յեղել. այս տարի առաջին փորձն է արվել և պետք է ասել, վոր միանգամայն իրեն արդարացրել է. սեկցիաների միջոցով միավորները կարողացել են գործնական մասնակցություն ունենալ վարչության գործունեյությանը: Սեկցիաների մեջ թույլ է յեղել կազմ-կուլտուրականը, վորի համար հրավիրված 12 նիստից կայացել է 2-ը:

Առանձնապես այս տարի մեծ աշխատանք են տարել կոլեկտիվներում լիազորները, վորոնք մեծ չափով աջակցել են փայավճարների գանձման անդամագրության:

Խոշոր բանվորական կոլեկտիվներում աշխատել են կոոպհանձնաժողովները, վորոնք նույնպես մեծ աշխատանք են տարել, այդ գործում. աչքի յե ընկնում Ջեթ-ոճառ գործարանի կոոպհանձնաժողովը:

Բացի այս բոլորից, հաշվետու տարում կիրառվել է նոր կազմակերպչական ձև ևս.-դա կենդանի հաճախումներն են կոլեկտիվները (հրահանգիչների միջոցով), գլխավորապես նախահաշվի ընդմիջումի ժամանակ, վորտեղ արվել են համապատասխան հրահանգներ—լիազորներին և զրույցներ են յեղել բանվորների հետ նրանց հետաքրքրող հարցերի շուրջը. այդպիսի հաճախում յեղել է 7. այս ասպարեզում ի հարկե դեռ շատ անելիքներ ունենք:

Հաշվետու տարում Բանկոոպը տարել է յերկու խոշոր կամպանիա, մեկը անդամագրության և փայավճարների գանձման և յերկրորդը հաշվետու վերընտրական կամպանիան, վորին մասնակից են արվել Բանկոոպի անդամների 60—70 տոկոսը:

# ԿՈՒԼՏ-ԿՐԹԱԿԱՆ, ԱԳԻՏ-ՊՐՈՊ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՄԱՍԻՆ.

**Կուլտ-կրթական աշխատանքներ**

| № № | Ագիտ-պրոպ և կենցաղային աշխատանքների անունները։ | 1926/27 տարում | 1927/28 տարում |
|---|---|---|---|
| 1. | Զեկուցումների քանակը | 25 | 84 |
| 2. | Կոոպ. խմբակների քանակը | — | 11 |
| 3. | » » լսողների քանակը | — | 330 |
| 4. | Նրանցից կանայք | — | 120 |
| 5. | Կանանց կոոպ. սեկ. քանակը | 2 | 4 |
| 6. | Քանի պատգամավոր և հաճախում | 50 | 120 |
| 7. | Կոոպ. անկյուններ | -- | 5 |
| 8. | Կոոպ. գրադարաններ | 1 | 5 |
| 9. | Նրանցից աշխատել են | — | 5 |
| 10. | Անցկացրած զրույցներ | — | 5 |
| 11. | Ներկա յեղողների միջին թիվը | — | 84 |
| 12. | Հարց ու պատասխանի յերեկոներ | — | 50 |
| 13. | Ցուցադրական կինո | — | 5 |
| 14. | Մանկական հրապարակ | — | 6 |
| 15. | Մանկապարտեզներ | — | 1 |
| 16. | Մոր և մանկան խանութ | — | 1 |
| 17. | Կոոպ. տեխնիկ թռչակառուն. | — | 1 |

**Դասընթացային վերապատրաստման աշխատանքներ.**

| Դասընթացքների անունները | Ում համար են դասընթ. | Քանի ժամ է աշխատել | Լսողներից քան | | Լսողներից | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Կին | Տղամ. | Յերիտասարդ մինչև 23 տ. | ԼԿՅԵՄ-ի անդամ |
| 3-ամսյա | Գործակատ. համար | 88 | 6 | 29 | 6 | 11 |
| 3-ամսյա | Կոոպ. ակտիվի համար | 170 | 50 | 7 | 52 | 40 |

**Ծանոթություն։**—1926-27 թվին վոչ մի դասընթացք չի յեղել։



Խորհրդային կոոպերացիայի հիմնական անելիքներից մեկն է տարածել աշխատավոր մասսաների և առաջին հերթին իր անդամների մեջ կոոպերացիայի գաղափարները, կոոպերատիվ դաստիարակչական աշխատանքների միջոցով։

Այդ տեսակետից անցյալներում Բանկոոպը շատ թույլ աշխատանք է տարել. սակայն, այս տարի մենք աղյուսակից տեսնում ենք, որ բավական մեծ նվաճումներ կան։

Այդ աշխատանքներում առաջին տեղը բռնել են մասսայական կուլտ- կրթական աշխատանքները, այսինքն զանազան զեկուցումները կոոպերատիվ տնտեսական խնդիրների շուրջը, խմբակների, կոոպերատիվ անկյունների, կինո-նկարների, կոոպ-ներկայացումների միջոցով։ Այս աշխատանքների մեծ մասը տարվել է ակումբներում։

Այնուհետև յերկրորդ մասն է կոոպերատիվ աշխատողների կադր ստեղծելու խնդիրը. կազմակերպված յերկու կուրսերից մեկը յեղել է հին գործակատարների վերապատրաստական համար. մյուս կոոպերատիվ ակտիվից կոոպերատիվ աշխատողներ պատրաստելու համար։

Բանկոոպն առաջին տեղն է տվել նաև նոր կենցաղի կազմակերպման գործին. ներկայումս բացի մանկապարտեզից ունի նաև մի մսուր Ջեթ-ոճառ գործարանին կից և մեկ «Մոր և մանկան խանութ»։Կոոպերատիվ կուլտ-կրթական աշխատանքներին 1928 29 թվին Բանկոոպը տվել է ավելի մեծ տեղ։ Բանկոոպն իբրև հասարակական կազմակերպություն, մասնակցել է բոլոր քաղաքական կամպանիաներին առանձնապես տարել է կոոպերացիայի միջազգային օրվա կամպանիան։

Խոշոր տեղ է բռնել կազմակերպչական աշխատանքներում Բանկոոպի անդամի անվան և գրքույկի շահագործման դեմ մղված պայքարը. մասնավոր առևտրականը դուրս վռնդվելով շուկայից դեռ ընդիմադրություններ և անում, օգտագործելով իր նպատակի համար անգիտակից Բանկոոպի անդամին կամ ինքը զանազան խարդախ միջոցներով դառնալով Բանկոոպի անդամ։ Նման յերևույթների դեմ մղվել է խիստ պայքար։

| | 25/26 տարում | 26/27 տարում | 27/28 տարում | Յենթադրված 28/29 տար. |
|---|---|---|---|---|
| Խանութների թիվը . . . . . . . . . . | 19 | 21 | 35 | 60 |
| Սրանցում բաժիններ . . . . . . . . . . | 26 | 42 | 49 | 101 |
| Աշխատակիցների միջին թիվը տարվա ընթացքում — Վարչություն . . | 41 | 33 | 31 | 39 |
| Աշխատակիցների միջին թիվը տարվա ընթացքում — Առևտրական ցանց | 101 | 114 | 176 | 250 |
| Վարչության մեկ աշխատակցին ընկնում է ցանցի աշխատակից . . . . . . . . | 2,4 | 3,5 | 5.7 | 6.4 |
| Մեկ գործակատարի ամսական նագրուզ. | — | 4183 | 4772 | 4400 |
| Առևտրական ապարատի մեկ աշխատակցի ամսական նագրուզկան . . . | — | 4622 | 4439 | 3484 |

Բանկոոպի ապրանքավաճառ ցանցը կազմված է 45 խանութներից, վորոնցից 6-ը ունիվերսալ տիպի յեն, իսկ մնացածները խառն: Վաճառվող ապրանքների բնույթի համեմատ այդ խանութներից 28-ը մթերային են, 17-ը այլ ապրանքների: Ամբողջ ցանցն ունի 23 կետ, ուր ծախվում է հաց: Մի տարում ավելացած է 10 խանութ, իսկ նրանց բաժանմունքները 49-ից հասցրված է 86-ի: Նոր բացված 10 կետերից 6-ը գտնվում են ֆաբրիկա-գործարանային ռայոններում և քաղաքի ծայրամասերում:

Միքանի խանութների աշխատանքները ռացիոնալ հիմքերի վրա դնելու և նրանց ունակություններն ավելացնելու նպատակով այդ խանութներում դրված են ավտոմատ դրամարկղներ, վորոնց առավելություններն այն է, վոր վերացվում է չեկեր գրելն ու. օրվա վերջին ընդհանուր հաշվարկ կատարելը: Մասամբ կիրառվում է մի քանի ապրանքների նախնական կշռման սիս-



տեմը: Այս տեսակի ձեռնարկումները վորոշ չափով ոժանդակում են հերթերի քչացման գործին:

Շրջանառության հետ միասին հաշվետու տարում բարձրացել է գործակատարների նագրուզկան և իջել է ցանցի մեկ աշխատակցի նագրուզկան: Այդ աննորմալ յերևույթը վերացնելու նպատակով ավելացրած է 1928—29 տարում գործակատարների թիվը և իջեցրած նրաց նագրուզկան մինչև 3488 ռ. վոր դարձյալ 4,1 տոկոս բարձր է Ցենտրոսոյուզի սահմանած նորմայից (3350 ռ.): 1927—28 թ. առևտրական ցանցի ծառայողների միջին թիվը յեղել է 119, իսկ 1928—29 թ. այդ թիվը կ՛հասնի 227-ի: Այսպիսով 1928—29 թ. ցանցը աճել է 75,5 տոկոս, իսկ այդ աշխատակիցների թիվը 91,6 տոկոս. աճել է նաև աշակերտների թիվը:

Ցանցի հետագա լայնացումն ապայման պետք է ընթանա բացառապես հօգուտ մթերային խանութների, վորոնք պետք է բացվեն անպայման քաղաքի ծայրամասերում:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

# «ԲԱՆԿՈՌՊԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

**Բանկոոպի շրջանառության մեջ գտնվող ապրանքների տեսակարար կշիռը։**

| Ապրանքների խմբավորում | 1926/27 թ. | 27/28 թ. | 28/29 թ. |
|---|---|---|---|
| 1. Գյուղատնտեսական մթերքներ | 12,8 | 15,9 | 21.28 |
| 2. Նպարեղեն և գաղութային | 26,5 | 33,6 | 38.32 |
| Այդ թվում հաց | 4,9 | 11,3 | 15.84 |
| » » շաքար | 10,0 | 10,1 | 9.64 |
| 3. Սապոն, լուցկի և ներկեղեն | 1,3 | 1,0 | 0,66 |
| 4. Մանուֆակտուրա | 33,5 | 21,0 | 15,85 |
| 5. Պատրաստի հագուստ | 0,6 | 2,3 | 3.15 |
| 6. Գալանտերյա | 5,1 | 6,0 | 5,3 |
| 7. Կոշիկեղեն, կաշվեղեն | 6,0 | 7,5 | 6,22 |
| 8. Մետաղե ապրանքներ | 3,2 | 2,7 | 1.26 |
| 9. Ապակեղեն, ֆարֆոր, ֆայանս | 0,9 | 1,5 | 0.89 |
| 10. Գրենական պիտույքներ | 0,3 | 0.2 | 0,16 |
| 11. Անտառանյութեր և կառույցք | 0,5 | 0.8 | 1.11 |
| 12. Նավթամթերքներ | 3,2 | 3,4 | 3.56 |
| 13. Ամուր վառելիք | 2,5 | 2,9 | 2.76 |
| 14. Տեխնիկական գործիքներ | 3,6 | 0,5 | 0.20 |
| 15. Այլ արդյունաբերական ապրանքներ | — | 0.7 | 0,25 |
| | 100 | 100 | 100 |



«ԲԱՆԿՈՈՊԻ
ՅԵՎ

Բանկոոպի

Ապրանք

1. Գյուղատնտեսա
2. Նպարեղեն և
Այդ թվում հա
» » շաք
3. Սապոն, լուցկի
4. Մանուֆակտու
5. Պատրաստի հագ
6. Գալանտերյա .
7. Կոշիկեղեն, կաշ
8. Մետաղե ապրա
9. Ապակեղեն, ֆա
10. Գրենական պի
11. Անտառանյութե
12. Նավթամթերքնե
13. Ամուր վառելիք
14. Տեխնիկական գ
15. Այլ արդյունաբե



Բանկոոպի շրջանառության դինամիկան համեմատած նախորդ տարվա հետ աճել է 40-50 տոկոսի սահմաններում։ Այդ օրինաչափությունը վկայում է այն մասին, որ Բանկոոպի ինչպես և առհասարակ սպառոպերացիայի դերը վճռական է։ 1924-26 թ. Բանկոոպն ըստ վաճառքի ունեցել է 3, 306 հազար ռուբլու շրջանառություն. 1927|28 թ, վաճառքը արտահայտվել է 4,483,0 հազար ռուբլով, 1927|28 թ. 6,340,0 հազար ռուբլի, իսկ 1928-29 թ. նախատեսնված է 9,500, հազար ռուբլու շրջանառություն։

Յեթե հետևենք Բանկոոպի վաճառած ապրանքների ասորտիմենտի բաղկացուցիչ մասերին, կ՚տեսնենք, որ սննդամթերքների տոկոսը տարեցտարի աճում է կազմելով 1926 27 թ. ամբողջ վաճառքի 39,3 տոկոսը, 1927|28 թ. 49,4, իսկ 1928 19 թ. յենթադրվում է այն հասցել 59,6 տոկոսի։

Բանվորական կոոպերացիայի հիմնական անելիքն այն է, որ լիակատար կերպով բավարարի իր անդամների բոլոր կարիքները, որոնց (անդամների) բյուջեյի սպառողական մասը ըստ Աշխվիճբյուրոյի տվյալների կազմում է 85,3 տոկոս։ Բյուջեյի այդ սպառողական մասում գերիշխող տեղը բռնում են սննդամթերքները (58,7 տոկոս), որոնց կանոնավոր մատակարարման համար Բանկոոպը լարում է իր բոլոր ջանքերը։

Այդ հարցում սակայն, Բանկոոպի դերը մասամբ կրավորական է (պասսիվ,) քանի որ նա գյուղատնտեսական շուկայում հանդես չի գալիս որպես մթերող, այլ ընդունում է այն, ինչ տալիս են նրան մթերող օրգանները։ Գյուղատնտեսական ծրագրի մեջ մեծ տեղը բռնում են կաթնամթերքներն ու միսը։ Կարիք չ՚կա այստեղ թվեր բերելու, քանի որ սպառողների համար միանգամայն պարզ են այն նվաճումները, որ ձեռք է բերել Բանկոոպը մսի մատակարարման գործում։ 1926|27 թ. միս և ձուկ Բանկոոպը վաճառել է 231 հազար ռուբլու, 27|28 թ. այդ գումարը հասնում է 382,4 հազար ռուբլու, իսկ 1928|29 թ. նախատեսնվում է վաճառել (միայն միս) 807,6 հազար ռուբլու, որը 121 տոկոսով կամ 2 և 1|4 անգամ ավելի է 1927|28 թ. գումարից։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Բանկոոպի ապրանքավաճառ ցանցն ընդունակ է կատարելու իր վրա դրված պարտականությունները, սակայն գյուղատնտեսական մյուս մթերքների հայթայթման խնդրում Բանկոոպը դեռ ունի շատ թերություններ ու բացեր, որ աշխատում է վերացնել։

Սննդամթերքների տեսակարար կշռի աճումը Բանկոոպի շրջանառության մեջ կատարվում է գլխավորապես ի հաշիվ մանուֆակտուրայի (25|26 թ. վաճառքի 33,5 տոկոս, 1927|28 թ. 21,0 տոկոս. և 28|29 թ. նախատեսնված է 15-85 տոկոս) և մետաղյա ապրանքների (25—26 թ. 3,2 տոկ., 27—28 թ. 2,7 տոկ. և 28—29 թ. 1, 26 տոկ.) մյուս կողմից եվ չպետք է մոռանալ, որ սպառողներին պատրաստի հագուստ մատակարարելու գործում խոշոր նվաճումներ են ձեռք բերված։ Այն ժամանակ, երբ 1926—27 թ. պատրաստի հագուստի վաճառքը կազմել է ամբողջ վաճառքի 0,6 տոկ., 27—28 թ. այդ տոկոսը հասնում է 2,3 տոկոսի, 28—29 թ. նախատեսնվում է 3,15 տոկոս։ Այդ թիվը սակայն փոքր է և հավանորեն իրականում կավելանա։



**Բանկոոպի 1928/29 տարվա գնումների ծրագիրը ըստ մատակարարողների. հազար ռուբլիներով**

| Ապրանքների խմբավորում. | Միությունից: Գեներալ պայմանով | Միությունից: Սովորական կարգով | Այլ կոոպ. միություններից | Պետական հիմնարկներից | Այլ մատակարարողներից | Սեփական արտադրությունից | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գյուղ. տնտ. մթերքներ . | 236,5 | — | 565,4 | 926,8 | 51,5 | — | 1780,2 |
| Մոսկատել-քիմիական . | 11,3 | — | 4.2 | 39,4 | 0.6 | — | 55,5 |
| Նպարեղեն և քաղ. . . . . | 1074.9 | — | 130,8 | 420,1 | 15,8 | 1570,1 | 3211,7 |
| Մանուֆակտուրա . . . . | 1286,6 | — | — | — | — | — | 1286,6 |
| Պատրաստի հագուստ . . | 209,7 | 51,0 | — | — | — | — | 260,7 |
| Գալանտերեյա և պարֆ. . | 147,4 | 70,1 | 51,6 | 151,3 | 9,2 | — | 429,6 |
| Կոշիկեղեն և կաշվեղեն . . | 323,3 | 51,4 | 20,4 | 106,7 | 6,3 | — | 511,1 |
| Մետաղե ապրանքներ . . | 95,5 | — | — | — | — | — | 95,5 |
| Ապակի, փարփոր, փայանս | 67,4 | — | — | — | — | — | 67,4 |
| Գրենական պիտույքներ . | — | 9,4 | 1,2 | 1,2 | — | — | 11,8 |
| Անտառանյութեր . . . . | — | — | — | 8,1 | — | — | 8,1 |
| Նավթամթերք . . . . . | — | 297,0 | — | — | — | — | 297,0 |
| Ամուր վառելիք . . . . . | — | — | 36,4 | 145,6 | — | — | 182,0 |
| Տեխնիկ. գործիքներ . . | — | — | — | 16,3 | — | — | 16,3 |
| Այլ արդյունաբ. ապրանք | — | — | — | 19,5 | — | — | 19,5 |
| Ընդամենը՝ . . | 3.452,6 | 481,9 | 810,0 | 1.835,0 | 83,4 | 1570,1 | 8233,0 |
| Տոկոսներ . | 41,9 | 5,85 | 9,85 | 22,29 | 1,01 | 19,1 | 100 |

**Ներքանկոոպի ապրանքների շրջանառման արագությունը 1927—28 տարվա ընթացքում 13 մնացորդների հիման վրա օրերով յեվ անգամ։**

**Խ ա ն ու թ ն ե ր ու մ**

| | Մանուֆակտուրա | Մթերային | Գալանտերյա | Ամանեղեն | Կոշկեղեն և կաշվեղեն | Պատրաստի հագուստ | Նավթ | Յերկաթեղեն | Գրենական | Ընդամենը խանութներում | Կրպակներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 16,85 | 21,10 | 3,86 | 4,32 | 8,15 | 5,35 | 37,0 | 1,35 | 1,66 | 11,9 | 31,10 |
| 2 | 21,4 | 17,0 | 93,5 | 83,5 | 44,2 | 29,3 | 9,6 | 89,0 | 216,5 | 30,3 | 4,8 |

| | | Ընդամենը ցանցում առանց պահ. | Ընդամենը ձեռնարկություններում | Ձեռնարկությունում առանց հացի և մսի | Ցանցում առանց հացի և մսի | Պահեստում (մատակարարման) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տարվա ընթացքում քանի անգամ . | 13,75 | 9,6 | 7,52 | 11,75 | 12,71 |
| 2 | Քանի օրվա ընթացքում . . . . | 26,2 | 39,9 | 47,8 | 31,2 | 28,3 |

«Ապրանքների շրջապտույտի արագությունը» աղյուսակի առթիվ.

Ապրանքների շրջապտույտը, ինչպես յերևում է աղյուսակից, նայած նրա բնույթին, չափազանց տատանվում է. ապրանքային այս կամ այն մասսայի խանութներում մնալու ժամանակամիջոցը 4, 8 օրից հասնում է մինչև 216, 5 օրվա։ Ամենից արագ պտույտ է անում սպիտակ նավթը՝ տարվա մեջ 47 անգամ. շրջապտույտի արագության տեսակետից յերկրորդ տեղը բռնում են սննդամթերքները՝ 21,1 անգամ տարվա ընթացքում և մանուֆակտուրան 16,85 անգամ։ Դժվար շրջապտույտ ունեցող ապրանքների թվին են պատկանում գրասենյակային և սկոլյանոյ ապրանքները, ամանեղենը և գալանտերեան։



Միջին տեղը բռնում են պատրաստի հագուստեղենն ու կոշկեղենը։

Աչքի առաջ ունենալով խանութների ու պահեստի ապրանքային մնացորդները և վողջ վաճառքն ըստ հիմնարկության, մենք տեսնում ենք, վոր բոլոր ապրանքները միջին հաշվով պտույտ են անում տարվա մեջ 9,06 անգամ, կամ 39,9 օրում։ Այստեղից այն յեզրակացությունն է բղխում, վոր Բանկոոպը պետք է ունենա ամիս ու կեսվա ապրանքային պաշար։

## ԳՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ՅԵՐԲԱՆԿՈՈՊԻ 1927/28 ՏԱՐՎԱ ՄԱՆՐԱՎԱՃԱՌ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

| ԽՄԲԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ | 1-ը հոկտեմբերի | 1-ը նոյեմբերի | 1-ը դեկտեմբերի | 1-ը հունվարի | 1-ը փետրվարի | 1-ը մարտի | 1-ը ապրիլի | 1-ը մայիսի | 1-ը հունիսի | 1-ը հուլիսի | 1-ը օգոստոսի | 1-ը սեպտեմբերի | 1-ը հոկտեմբերի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գյուղատնտեսական . | 100,0 | 99,90 | 99,01 | 98,57 | 103,76 | 104,80 | 104.85 | 103,42 | 102,75 | 102,38 | 101,57 | 102,48 | 101,89 |
| Արդյունաբերական-մթերային . . . | 100,0 | 100,00 | 100,00 | 100,00 | 100,00 | 100,00 | 100,00 | 100,00 | 100,00 | 100,00 | 101.35 | 101,71 | 101.21 |
| Արդյունաբերական ոչ մթերային . . . . | 100,0 | 100,15 | 100,15 | 99.14 | 99,14 | 99,14 | 96.86 | 98,43 | 98,97 | 98,59 | 98,84 | 98,84 | 98,84 |
| Ընդհանուր ինդեքս . | 100,0 | 100,00 | 99,80 | 99,18 | 100.67 | 100,97 | 100.83 | 100,27 | 100,29 | 100,00 | 100,15 | 100,30 | 100,13 |



Մանրավաճառ գների դինամիկան ամեն մի կոոպերատիվ կազմակերպության առևտրական քաղաքականության հիմնական ցուցանիշն է հանդիսանում:

Բանկոոպի մանրավաճառ գների կորագիծը 1927 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1928 թ. հոկտեմբերի 1-ը պարզ արտահայտում է գների այն քաղաքականությունը, որ տարել է Յերևան քաղաքի ամենախոշոր սպառողական կոոպերատիվ կազմակերպությունը: Այստեղ տրված է յերկու կորագիծ. մեկը դրանցից ապրանքների գրուպաների ինդեքսի կորագիծն է, մյուսը ընդհանուրը:

Գյուղատնտեսական ապրանքների գները (——գիծ) մինչև հունվարի 1-ը շարունակ ընկնում են. սակայն, փետրվարի 1-ին ուժեղ թռիչք են գործում մսեղենի գրուպայի գների բարձրացման հաշվին: Այնուհետև նրանք շարունակում են բարձրանալ նախ կաթնամթերքների և ապա մարտից—ապրել հացամթերքների գրուպայի գների հաշվին. հետո սկսած ապրիլի 1-ից մինչև օգոստոսի 1-ը նրանք ընկնում են կաթնամթերքների և մսեղենի գրուպաների գների հաշվին. սակայն, 1928 թ. հոկտեմբերի 1-ին գյուղատնտեսական ապրանքների գրուպայի գները 1,89 տոկոսով բարձր են այն մակարդակից, որի վրա գտնվում էին այդ ապրանքների գները 1927 թ. հոկտեմբերի 1-ին: Այդ գրուպայի ապրանքների գները կանոնավորելու գործում Բանկոոպը որևէ ազդեցություն անել չի կարող, որովհետև լինելով սպառող կազմակերպություն, նա ամբողջապես կախված է մթերող օրգաններից (Հայգյուղկոոպ, Պանիրգյուղկենտրոն, Անասնարդյունաբ):

Արդյունաբերական—մթերային ապրանքների գրուպայի ինդեքսի շարժումը (..........գիծ) հավասար է այդ ապրանքների գների այն մակարդակին, որ գոյություն ուներ 1927 թ. հոկտեմբերի 1-ին և այդպես շարունակվում է մինչև 1928 թ. հուլիսի 1-ը, որից հետո կորագիծը սկսում է բարձրանալ ի հաշիվ ըմպելիք խմիչքների (գինի) գրուպայի գների: Այսպիսով տարին վերջանում է գների այնպիսի մակարդակով, որը 1,21 տոկոսով բարձր է 1927 թ. հոկտեմբերի գների մակարդակից:

Այլ պատկեր են ներկայացնում արդյունաբերական ոչ-մթերային ապրանքների գները (..........գիծ): Այստեղ կորագիծը գրեթե ամբողջ տարվա ընթացքում ցածր է գների այն մակարդակից, որ գոյություն ուներ 1927 թ. հոկտեմբերին:

Յեթե հունիսին ու հուլիսին տեղի չե ունենում փոքրիկ տատանում, ապա դա լինում է ի հաշիվ ամանեղենի և գալանտերիայի գրուպաների. ոգոստոսին այդ ապրանքների գները կայունանում են և տարին վերջանում է գների այնպիսի մակարդակով, վոր 1,16 տոկոսով ցածր է 1927 թ. հոկտեմբերյան գների համեմատությամբ։

Դառնալով ընդհանուր ինդեքսի կորագծին (2-րդ աղյուսակ) կարելի չե միայն արձանագրել, վոր նա մասնավոր ինդեքսների մի գումար է հանդիսանում։ Գյուղատնտեսական ապրանքների գրուպայի գների խիստ բարձրացման հետևանքով կորագիծը սկսած փետրվարից բարձրանում է 1927 թ. հոկտեմբերի 1-ի գներից. այդ դրության մեջ էլ մնում և տարին վերջանում է բոլոր գրուպաների ապրանքների գների 0,13 տոկոս բարձրացումով հանդեպ 1926 թ. հոկտեմբերին յեղած գների։

**Ծանոթություն.**—Մանրավաճառ գների ինդեքսը կազմած է կշռած չերկրաչափական ձևով։ Գյուղատնտեսական մթերքների գրուպայի մեջ մտնում են 17 ապրանք, արդյունաբերական մթերային գրուպայի մեջ 11 և արդյունաբերական վոչ մթերային գրուպայի մեջ 32 ապրանք։ Ինդեքսում հիշված ապրանքների գրուպաները կազմում են Բանկոոպի 1927/28 տարում վաճառված ապրանքների 91,82 տոկոսը։

Վորպես բազա վերցրած է 1927 թվի հոկտեմբերի 1-ի գները և հարաբերությունները դուրս են բերված շղթայական մեթոդով։

---



## ԲԱՆԿԿՈՈՊԻ ԱՐՏԱԴՐ. ՁԵՌՆԱՐԿ. ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ.

| | | | |
|---|---|---|---|
| **1. Հացի արտադրությունը** | | | |
| Փռերի թիվը . . . . . . | 1 | 2 | 2 |
| Բանվորների տարվա միջին թիվը . . . . . . | 42 | 69 | 69 |
| Արտադր. հացի քան. կիլ. | 1.469.452 | 4.210.219 | 8.742.800 |
| » » արժ. ռուբ. | 293.838 | 722.357 | 1.398.528 |
| **2. Յերշիկանոց** | 1 | 1 | 1 |
| Բանվորների տարվա միջին թիվը . . . . . . | 3 | 3 | 3 |
| Արտադրանք. արժ. ռուբ: | 28.242 | 39.594 | 57.200 |
| **3. Հրուշակարան** | 1 | 1 | 1 |
| Բանվորների տարվա միջին թիվը . . . . . . | 18 | 21 | 23 |
| Արտադրանք. արժ. ռուբ. | 88.272 | 102.136 | 273.600 |
| **4. Ժողովրդական սնունդ** | | | |
| Ճաշարանների թիվը . . | 4 | 3 | 2 |
| Բանվ. և ծառ. տարվա միջին թիվը . . . . . . | 106 | 93 | 80 |
| Բաց թողնված ճաշերի և ընթրիքների թիվը . . | 445.419 | 427.971 | 504.000 |
| Բաց թողնված ճաշերի ընթրիք. արժեքը . . . . | 468.150 | 451.051 | 554.000 |
| Թեյարանների թիվը . . | 1 | 1 | 1 |
| Շրջանառություն . . . . | 67.413 | 47.138 | 90.000 |
| **5. Վարսավիրանոցի շրջանառություն . . . . . .** | 69.725 | 37.196 | 42.200 |
| **6. Ծախսեր տարվա ընթացք.** | 299.393 | 404.885 | 655.362 |
| **7. Արդյունք ոգուտ . . . .** | — | 76.903 | 84.391 |
| **8. Վնաս . . . . . . . . .** | 5.239 | — | — |

Հացի շուկայի լարված վիճակը և սպառողին լավորակ հաց մատակարարելու պահանջը մի չափազանց կարևոր խնդիր է դնում կոոպերացիայի առաջ, այն է, ժողովրդական սննդի գործին տալ ճիշտ կազմակերպություն և ապահովել նրա կանոնավոր զարգացումը նկատի առնելով այն հանգամանքը, վոր այդ գործը հանդիսանում է սոցիալիստական շինարարության կարևոր պրոբլեմներից մեկը, աշխատավոր մասսաների կենցաղը սոցիալիստական սկզբունքներով վերակառուցելու խնդրում։

Ինչպես յերևում է աղյուսակից, արտադրության ասպարեզում Բանկոոպը խոշոր գործ է կատարել։ Թխվող հացի քանակը տարեցտարի աճում է հսկայական քայլերով։ 1916/27 թ. թխվող հացի քանակը յեղել է 1.469,452 կիլոգրամ, հաշվետու տարում այդ թիվը հասցրված է 4.210,219 կիլոգրամի, իսկ 1928/29 թ. հավանորեն կարտադրվի 8.742,600 կիլոգրամ։

Յեթե քաղաքի բնակչության գործածած հացի նորման ընդունենք 500 կիլոգրամ, («Խորհրդային Հայաստան»-ը թվերով. յերես 116, աղյուսակ № 4) իսկ Յերևանի բնակչության թիվը 70,000, ապա Յերևանի տարեկան գործածության համար պետք յեղած հացի քանակը կ՛արտահայտվի 12,6 միլիոն կիլոգրամով։ Այդպիսով 1028/29 թ. հացի պահանջի 69,5 տոկոս պետք է բավարարի Բանկոոպը։ Մեքենայական փռի կառուցման միջոցով ավելացված է նաև այդ փռերի արտադրությունը 186 տոկոսով։

1926/27 թ. փռերում միջին թվով աշխատել են 41 աշխատակից. ամեն մի աշխատակցի տարեկան բեռնվածությունը հավասար եր 35,000 կիլոգրամի, մինչ դեռ 1926/28 թ. աշխատակցի բեռնըվածությունը արդեն յեղել է 60,700, իսկ 1928—29 թ. նախատեսնվում է այդ բեռնվածությունը հասցնել 196,000 կիլոգրամի։ Դա դեռ չափազանց քիչ է համեմատած ԽՍՀՄ-ի մյուս հացագործարանների հետ։

Կոոպերացիայի համար համեմատաբար նոր է ժողսննդի կազմակերպման գործը։ Այն դժվարությունները, վորոնց հանդիպում ենք ճաշարանները շահավետ ձեռնարկների վերածելու աշխատանքներում, հաշվետու տարում միանգամայն բացասական են անդրադարձել ճաշարանների գործունեության վրա։ Բայց թողնված ճաշերի և ընթրիքների քանակը նախորդ տարվա համեմատությամբ հաշվետու տարում իջել է 3,94 տոկոսով. իջել է նաև թեյարանի վաճառքը (42,9 տոկոս) 3 ամսվա անգործության պատճառով։



Հաշվետու տարում ճաշարանների թիվը կրճատվել է․ գործել են յերկու ճաշարան. միայն ամառային սեզոնում բացվել է յերրորդը։ Սակայն խոհանոցի մեջ մասնակի մեքենայացում կիրառելու, շենքը լայնացնելու, աշխատանքների սիստեմի և հաստիքների մեջ վորոշ փոփոխումներ մտցնելու միջոցով նախատեսնվում է 1928/29 թ. ավելացնել ճաշարանների սպասարկման ունակությունները։ Յեթե 1926/27 թ. մի աշխատակցի տարվա բեռնվածության աստիճանն արտահայտվում եր 4,200 ճաշով, ապա հաշվետու տարում այդ բեռնվածությունն արդեն հավասար եր 4,600 ճաշի, իսկ 1828/29 թ. այդ կ՛հասցնվի մինչև 6,300 ճաշի և ընթրիքի։ Պետք է ասել, վոր ճաշերի վորակը համեմատած մթերքների գների շարժման հետ, անհամեմատ բարձր է, իսկ սպասարկումը շատ բացեր ունի։

Բանկոոպի ունեցած մյուս նվաճումներից կարելի յե հիշատակել չերշիկի և կոնդիտերի ապրանքների արտադրումը. ավելորդ է խոսել այն մասին, թե մասնավոր տնայնագործներն ինչ սուրոգատներով եյին կերակրում ազգաբնակչությանը։ Մինչդեռ Բանկոոպի գործարաններում ազգաբնակչության սնունդը միանգամայն ապահովված է թարմ նյութերից պատրաստված չերշիկի և կոնդիտերսկի ապրանքների արտադրությամբ։

Այդ նյութերի արտադրությունը փոքր դեր չի կատարում բնակչության սննդի գործում։ Այստեղ Բանկոոպն ընթանում է այդ ձեռնարկությունը լայնացնելու և պրոդուկցիան ավելացնելու գծով, վորը արտահայտված է աղյուսակում,

Անդրադառնալով արտադրական բաժնի գործունեության արդյունքներին, պետք է ասել, վոր նրա շահույթը կարող եր լինել և ավելի, յեթե գոյություն չունենար ճաշարանների տված վնասը, վոր հասնում է 20,792 ռուբլու։ Անշուշտ ժողովրդական սննդի ձեռնարկներից չի կարելի սպասել ոգուտներ, բայց և այնպես Բանկոոպի վարչությունը ձգտում է մոտակա ժամանակներում այնպիսի պայմաններ ստեղծել, վոր այդ ձեռնարկները կարողանան իրենց արդարացնել։

Սննդամթերքների գների աճումը հաշվետու տարում, վոր արտահայտված է «գների քաղաքականությունը» գլխում, բոլորովին չի անդրադառնում բաց թողնված ճաշերի գների վրա ճաշարանի գործունեության ամբողջ ընթացքում։ Ճաշերի գների կայունությունը (60 կոպ. և 1 ռուբլի) ապացուցում է մեր ասածները։ Տարվա վորոշ ժամանակ ճաշերի վորակի վատանալըն ամբողջապես կախված է ստացվող մթերքների վորակից։

# ՅԵՐԲԱՆԿՈՈՊԻ ԳՈՐԾՆԵՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՅԱԴՐՅԱԼՆԵՐԸ

| | Ցուցադրյալներ | 1925/26 | 1926/27 | 1927/28 | 1928/29 |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տարվա միջին շրջանառու միջոց. | 501,7 | 799,0 | 1.226,8 | 1.678,8 |
| 2 | Տարվա վաճոքը | | | | |
| | ա. առևտրական ցանց . . . . | 3.306,0 | 4.483,0 | 6.413,0 | 9.500,0 |
| | բ. ճաշարաններ . . . . . . | 452,7 | 569,0 | 525,6 | 826,0 |
| 3 | Շրջանառու միջոցների շրջանառության արագությունը | | | | |
| | ա. տարվա ընթացք. անգամ . | 7,5 | 6,3 | 5,3 | 5,8 |
| | բ. » » օրերով . | 48 | 57 | 68,8 | 62 |
| 4 | Ապրանքների միջին մնացորդը | 364,3 | 603,0 | 890,7 | 1.162,0 |
| 5 | » շրջանառութ. արագ. | | | | |
| | ա. անգամ . . . . . . . . . | 10,3 | 8,4 | 8,6 | 8,9 |
| | բ. օրերով . . . . . . . . .— | 34,9 | 42,8 | 41,8 | 40,5 |
| 6 | Վարկավորման միջին տևողությունը օրերով . . . . . | 50 | 54 | 49 | 44 |
| 7 | Սեփական միջոցներ . . . . . | 96,3 | 193,2 | 278,7 | 575,6 |
| 8 | » » շրջանառութ. մեջ | 19,4 | — 25,9 | —174,6 | +122,3 |

## «Բանկոոպի գործնեյության հիմնական ցուցանիշները» աղյուսակի առթիվ.

Բանկոոպի գործնեյության հիմնական ցուցանիշների աղյուսակը պարզ ցույց է տալիս կազմակերպության ընդհանուր աճումը։ Թե շրջանառու միջոցները և թե շրջանառությունը 25/26 թվի համեմատությամբ աճել են խոշոր չափերով։



Զ․նայած սեփական միջոցների աճմանը, նրանց մասնակցության աստիճանը Բանկոոպի շրջանառության մեջ շարունակ ընկնում է և 1928 թ. հոկտեմբերի 1-ին մենք արդեն տեսնում ենք, որ օտար միջոցները (174,600 ռ.) դրված են Բանկոոպի անշարժ գույքի մեջ։ Այդ բացասական յերևույթ է և պետք է վերացվի 1928/29 տարում ի հաշիվ փոխավճարների լրիվ գանձման և նորմալ կուտակումների։

Մյուս տարրերից անհրաժեշտ է նշել շրջանառու միջոցների շրջապտույտի արագության համար ստեղծված անբարենպաստ դրությունը։ Այդ Արագությունը տարեցտարի դանդաղում է և 1925/26 թ. 48 օրվա հանդեպ մենք ունենք 68 օր. 1927/28

Ապրանքների շրջապտույտը նույնպես արագացել է 1925-26 թ. այդ շրջապտույտը կատարվել է 43 օրում, իսկ 1927-28 թ. 37-20 օրում։ Այստեղ պետք է նշել, որ այդ արագությունը հաշված է ըստ յերկու մնացորդների, մինչդեռ աղյուսակում ավելի ճշգրիտ լինելու համար հաշված է ըստ 13 մնացորդների։

## ՅԵՐԲԱՆԿՈՌՊԻ ԾԱԽՍԵՐԸ ԲԱՑԱՐՁԱԿ ԹՎԵՐՈՎ (ՀԱԶԱՐ ՌՈՒԲԼԻՆԵՐՈՎ) ՅԵՎ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ԴԵՊԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ.

| | ԿԱԽՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԽՍԵՐ | | | | | | | | | | | | Անկախ ծախսեր | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Վարչական ծախսեր | | | | | | Ցանցի պահպանությունը | | | | | | | | |
| | Աշխատավարձ | | Այլ ծախք. | | Ընդամենը | | Աշխատավարձ | | Այլ ծախք. | | Ընդամենը | | | | |
| | Գումար | Տոկոս | Գումար | Տոկոս | Գումար | Տոկոս | Գումար | Տոկոս | Գումար | Տոկոս | Գումար | Տոկոս | Գումար | Տոկոս | Գումար |
| Փաստացի 1926/27 տար. . . . | 52,6 | 1,04 | 13,5 | 0,27 | 66,1 | 1,31 | 98,4 | 2,17 | 33,3 | 0,76 | 131,7 | 2,93 | 239,7 | 5,35 | 437,5 |
| Փաստացի 1927/28 տար. . . . | 58,3 | 0,85 | 12,2 | 0,18 | 70,5 | 1,03 | 126,9 | 2,00 | 31,5 | 0,50 | 158,5 | 2,50 | 402,6 | 6,37 | 592,4 |
| Ըստ նախահաշվի 1928/29 . . | 70,8 | 0,68 | 14,5 | 0,14 | 85,3 | 0,82 | 257,6 | 2,71 | 46,2 | 0,48 | 303,8 | 3,19 | 682,8 | 7,20 | 1044,9 |



«Բանկռոպի ծախսերը» աղյուսակի առթիվ.

Ծախսերի աղուսակում ցույց են տրված ինչպես ծախսերի բացարձակ թվերը, նույնպես եվ տոկոսային հարաբերությունները տարվա վաճառքի նկատմամբ։

Վարչության պահպանության համար արվող «կախում ունեցող» ծախսերի մասում տոկոսը հանված է ինչպես առևտրական ցանցի, նույնպես և արտադրական ձեռնարկների շրջանառության նկատմամբ, իսկ ցանցի պահպանության «կախում չունեցող» ծախսերի տոկոսը վերցրած է առևտրական ցանցի շրջանառության նկատմամբ։

Չնայած վարչության պահպանության վրա արվող ծախսերի բացարձակ աճման, այնուամենայնիվ ծախսերի տոկոսը շրջանառության համեմատությամբ տարեցտարի ընկնում է՝ թե աշխատավարձի, և թե այլ ծախսերի վերաբերմամբ։

Այդպես չի սակայն, դրությունը ցանցի պահպանության և անկախ ծախսերի նկատմամբ։

Առաջինի վերաբերմամբ նրանց տոկոսը 1926/27 թ. ընկնելով 1927/28 թ. բարձրանում է 1828/29 թ. նախահաշվային յենթադրությունների մեջ։ Դա բխում է նրանից, վոր 1928/29 թ. թե ցանցն է նշանակալից չափերով լայնացվել, թե գործակատարների բեռնվածությունն է քչացել և եթ սպառողների սպասարկման գործն է բարելավվել։

Անկախ ծախսերի վերաբերմամբ պետք է ասել, վոր այստեղ տոկոսը մեծ չափերով բարձրանում է շնորհիվ հարկային հատկացումների։

# ԲԱԼԱՆՍԻ ԱՐԹԻՎ

## Ինչ միջոցներով է աշխատում կոոպերատիվը

| Արժեքներ և պահանջ (կոոպերատիվը ունի) | Առ 1/հոկտ 1927 թ. | Առ 1/հոկտ 1928 թ. | Դրամագլուխ և պարտք (ում է պատկանում) | Առ 1/հոկտ 1927 թ. | Առ 1/հոկտ 1928 թ. |
|---|---|---|---|---|---|
| Փող դրամարկղում . . . . . . . . . | 16.691 | 64.597 | Բանկերին և պետհիմն . . . . . . | 1153355 | 1089838 |
| Ապրանք խանութներում . . . . . . | 542774 | 963962 | Կոոպերատիվ կենտրոն, . . . . . . . | — | 488464 |
| » և պահեստում . . . . . . . | | | Տարբեր հիմնարկներ. . . . . . . . . | 205886 | 113378 |
| Սեփ. արտ. ապրանք և նյութ. . . . | 48443 | 35222 | **Սեփական միջոցներ** | | |
| Պարտքեր անդամներից . . . . . . | 57305 | 73700 | Փայադրամագլուխ . . . . . . . . . | 72040 | 111265 |
| » ծառայողներից . . . . . . | 1426 | 1258 | Հիմնական կապիտալ . . . . . . . . | 49705 | 33407 |
| » մատակարարողն . . . . . . | 235211 | 244462 | Հատուկ կապիտալ . . . . . . . . . | 21466 | 51308 |
| » այլ պարտքատերեր . . . . . | 381580 | 106005 | Ընթացիկ տարվա օգուտ . . . . . . | — | 89849 |
| Ունեցվածք. և արժ. թղթեր . . . . . | 209374 | 405334 | | | |
| Վնաս ընթացիկ տարում . . . . . . | 9747 | — | | | |
| » անցյալ տարիների . . . . . . | | 82.969 | | | |
| Բալանս . . . . | 1502452 | 1977509 | | 1502452 | 1977509 |



Ինչպես յերևում է բալանսի պասսիվից՝ հաշվետու տարվա ընթացքում Բանկոոպն ունեցել է 89. 848 ռուբ. 44 կ. օգուտ թե առևտրական և թե արտադրական ձեռնարկներում, սակայն անցյալներում մնացել եյին մի շարք գումարներ, վորոնք պետք է 1927/28 տարվա սկզբին դուրս գրվեյին, բայց թողնված եյին բալանսի վրա։ Վարչությունը բալանսը վերջնականապես մաքրելու համար ստիպված յեղավ այդ վնասները դուրս գրել հաշվետու տարվա օգուտից. այսպիսով ակտիվում, վորպես վնաս անցյալ տարիների դուրս է գրված։

1. Անհուսալի պարտքեր . . . . . . . . 16.362 ռ. 38 կ.
2. Արտադրական ձեռնարկները վնասներ . 23.639 ռ. 48 կ.
3. Կասկածելի պարտքեր . . . . . . . . 21.610 ռ. 30 կ.
4. Անցյալ տարիների վերանորոգում . . . 21.356 ռ. 93 կ.

Ընդամենը . . 82. 969 ռ. 09 կ.

Այսպիսով առ 1/10 1928 թ. Բանկոոպին մնում է մաքուր օգուտ 6789 ռ., վորից հատկացնելով 10% չեկամտ. հարկ կմնա Դրամարկղում չենթակա դասավորման 6191 ռ.

ԺՈՂ. ԼՈՒՍԱՎ. ԿՈՄԻՍ. ԳՐԱԴԱՐԱՆ ԱՆ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ССР АРМ. ССР ИМ. А. МЯСНИКЯНА

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0069584